

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մայիսի 11—19 օրերին Մոսկվայում, Ռուս Պատրիարքության հրատապակշության շենքում, տեղի ունեցավ Ռուսիայի մկրտության 1000-ամյակին նվիրված միջազգային երկրորդ գիտական եկեղեցական համաժողովը, որի թեման էր՝ Ռուս Պրավոլավ եկեղեցու Աստվածաբանությունն ու ոգեկանությունը:

Գիտաժողովին մասնակցում էին 28 երկրներից հրամիրված 151 եկեղեցական գործիչներ և գիտականներ: Մասնակիցների թվում կային 79 սովորական և 72 արտասահմանական եկեղեցացոցիներ: Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, ԱՄՆ, Անտիոք, Ռումինիա, Լեհաստան, Բուլղարիա, Շեխուլվակիա, Սերբիա, Կիպրոս, Հունաստան, Եթովպիա, Անգլիա, Ֆինլանդիա, Շվեյցիա, Հոռոմեական կաթոլիկ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ և այլն: Գիտաժողովին իրենց ներկայացոցիներն էին ուղարկել նաև մի շարք Աստվածաբանական և աշխարհիկ գիտական-ուսումնական հաստատություններ՝ Աթենք, Թեսալոնիկե, Փարիզ Ս. Սերգիի անվան աստվածաբանական ինստիտուտ, Հռոմի պապական ինստիտուտ, Ռեգեներուրգի (ԳՖՀ) արեվելյան ինստիտուտ, Բենջենի, Հալլեի, Վիտենբերգի, Թյունինգենի համալսարաններ: ՍՍՀՄ-ից իրենց մասնակցությունն էին բերել Վրաց, Էստոնիայի և Լատվիայի Եկեղեցիները, Մոսկվայի և Լենինգրադի հոգևոր ակադեմիաները, Օդեսայի, Կառավասի և Մցմեթայի հոգևոր ճեմարանները, Մոսկվայի պետական համալսարանը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի մի շարք ինստիտուտներ և մի քանի այլ քրիստոնեական հարանվանություններ: Ն գիտական հաստատություններ:

Հայ Եկեղեցու կողմից, Վեհափառ Հայութեանի բարձր կարգադրությամբ, իր մասնակցությունը բերեց Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի դասախոս Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանը:

Մայիսի 11-ին, ժամը 9.30-ին, տեղի ունեցավ համաժողովի բացումը: Բացման խոսքով համեմատ եկավ համաժողովի հայագահ, Կիկի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը: Այնուհետև Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը ընթերցեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի ողջույնի խոսքը՝ ուղղված համաժողովի մասնակիցներին: Ուղույնի խոսք ասաց նաև Վոլոկուլանայի միտրոպոլիտ Պիտիրիմը

(Ռուս Եկեղեցու հրատարակչության բաժնի նախագահա):

Համաժողովի ընթացքում ներկայացվեց շորջ 94 զեկուցում: Ամեն մի զեկուցումից հետո տեղի էր ունենում մտքերի փոխանակություն և քննարկում: Զեկուցումները վերաբերում էին Ռուս Եկեղեցու Աստվածաբանական մտքի պատմական զարգացմանը, Ռուս ճգնավորական շարժմանը և նրա նշանակությանը հարեւան ժողովուրդների կամքում, Ռուս Աստվածաբանության և ոգեկանության դերին ուստական մշակույթի և կենցաղի վրա, դրանց արտացոլումը ուստական մշակույթի հայտնի գործիչների ստեղծագործություններում և այլն: Զեկուցումներում ընդգծվեց նաև իսակաղաքարաբական սկզբունքների դերը ուստի Աստվածաբանության նոգուր ներդրումը համաշխարհային Եկեղեցիների ծրագրում, Ռուս Եկեղեցու միախանական ինստիտուտում և այլն: Գիտաժողովը ընդգծեց քրիստոնեության ընդունման խորը և պայծառակերպող ազդեցույթնը հին Ռուսաստանի հասարակական և մշակութային կյանքի բոլոր ոլորտների վրա:

Գիտաժողովի մասնակիցներն ընդգծեցին չերմ և ամեկոծ մօնուրուրը և ընդհանուր ձգտումը դեպի Աստվածաբանական, գիտական ու պատմական ճշմարտությունների վերհանումը: Մայիսի 15-ին և 16-ին գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Անդրեյ Ռուբլյովի թանգարան, Կրեմլ, Ս. Դամիելյան վանք և Ռուս Եկեղեցու արտաքին կապի բաժին:

Մայիսի 17-ին մասնակիցներն այցելեցին Զագորյու, որ Ս. Սերգեյի հիմնած Սուրբ Երրորդություն վանքում մասնակցեցին Ս. պատարագի:

Մայիսի 18-ին, գիտաժողովի ավարտին ընդունվեց հաղորդագրություն, որ հույս հայտնվեց, որ ինչպես այս, այնպես էլ նըման այլ գիտաժողովներ կնպաստեն Աստվածաբանական մտքի զարգացմանը, ոգեկանության նշանակությանը ընթալմանը ժամանակակից աշխարհում, Եկեղեցիների միջև եղբայրական հարաբերությունների ամրապնդմանը և բոլոր Եկեղեցիների համաժողակցության հզորացմանը՝ ի նպաստ աշխարհի մշտառ իսակաղության:

ՊԱՐԳԵՎ ՎՐԴ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ